

ՆԱԴԻՆԵ ԿԱՐԱՆԱՆՑԱՆ

Շիրակի պետական համալսարանի
հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի
հայոց լեզվի և գրականության ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

**ԱՇՈՏ ԱՂԱԲԱԲՑԱՆԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԵՐԸ
(«ՌԵԶԻԴԵՆՏԸ», «ՄԵՆԱԿԸ»)**

Բանալի բառեր և արտահայտություններ. Հայկ Հովակիմյան, Գրիգոր Գուրզադյան, Առնո Սարոյան, կենսագրական վեպ, փաստական ճշմարտություն, գեղարվեստական ճշմարտություն, հերոսի նախատիպ, գեղարվեստական կերպար:

Ключевые слова и выражения: Айк Овакимян, Григор Гурзаян, Арно Сароян, биографический роман, документальная правда, художественная правда, прототип героя, художественный персонаж.

Key words and expressions: Hayk Hovakimyan, Grigor Gurzadyan, Arno Saroyan, biographical novel, factual truth, fictional truth, hero prototype, fictional character.

Խորհրդային Միության փլուզումից հետո գիտական աշխարհում և գրականության մեջ հեղափոխման գործընթաց է սկսվում: Հնարավորություն է ստեղծվում հանիրառի մոռացված անունների, մարդկային կյանքերի բացահայտման համար: Գրողները ևս գիտական մոտեցում են դրսևորում. պահոցներից հանվում են նոր ու հետաքրքրական և մինչ այդ անհայտ նյութեր մեծ մարդկանց կյանքի մասին: Այս առումով կենսագրական վեպի համար լայն հնարավորություններ է ընձեռնվում:

Աշոտ Աղաբաբյանը երկու կենսագրական վեպի հեղինակ է՝ «Ռեզիդենտը» (2004, 2014) և «Մենակը» (2013): Վեպը պատմում է հայազգի նշանավոր հետախույզ և քիմիկոս Հայկ Բաղալի Հովակիմյանի (1898-1967) մասին: Հեղինակը բացահայտում է Հովակիմյան-ռեզիդենտին (հետախույզության պետ), գիտնականին, արվեստասերին և մարդուն: Հետախույզի կյանքն, անշուշտ, գաղտնի է, վտանգներով լի, նրա կյանքի հերոսական դրվագները հայտնի են քչերին, իսկ պտուղները վայելելու են ուրիշները. հեղինակի պատկերավոր արտահայտությամբ նշանակում է «քայլել դանակի շեղբի վրայով»¹:

¹ Աղաբաբյան Ա. Լ., Ռեզիդենտը, Երևան, Լուսակն, 2014, էջ 24:

Հետախուզությունը փակ բնագավառ է և հայազգի հետախույզ Հայկ Հովակիմյանի մասին պատմվում է Արմենակ Մանուկյանի (Արման Ամրիկյան) «Դոկտոր, հետախույզ եք» (Ե., 2000 թ.) և Աշոտ Աղաբաբյանի «Ռեզիդենտը» (Ե., 2004, 2014) գրքերում: Ամրիկյանի վիպակը տալիս էր խորհրդային հայազգի ռեզիդենտի ուրվագծային կեպարը և հետախույզի կյանքի ողիսականն ամբողջ խորությամբ չի երևում, իսկ ժամանակաշրջանի մասին պարզապես ակնարկվում է: Գլխավոր հերոսի կնոջ՝ Վերայի (Վշնասպուհի Աբովյանի) և աղջկա՝ Հեղինեի՝ Գեգինայի անունները հեղինակի ստեղծածն են՝ Լուիզա և Լենա: Աշոտ Աղաբաբյանը պահպանել է հերոսների իրական անունները և փաստականությունը չի խախտել. դրա կարիքը չկար, քանի որ նյութը բոլորովին թարմ էր և հետաքրքրական:

Ժամանակակից կենսագրական վեպերը շատ քիչ դեպքերում են սկսվում հերոսի ծնունդով. «Ռեզիդենտում» ևս այդպես է: Գործողությունների ժամանակը 1931-ից է սկսվում, երբ խորհրդային համակարգն իր վայրագ «տարերքի մեջ» էր. 1930-ի սեպտեմբերի 24-ին գնդակահարել էին 48 պրոֆեսորի: Հովակիմյանը տազնապի մեջ է. լաբորատորիայից տարել են իր ընկերներին՝ Վասյա Շչուկինին և Ռոման Մելնիկին: Նա ուզում է վերադառնալ Հայաստան. կինը հակադարձում է. «Ինքդ քեզնի՞ց ես փախչում, ի՞նչ է, կարծում ես այնտեղ «ժողովրդի թշնամիներ» չեն որսում»². այնտեղ բռնել էին հայր Ստեփանոսին՝ տնից հանելով ընդամենը 15 մոմ:

Առաջին իսկ էջերից երևում է խորհրդային ժամանակաշրջանի պատկերը: Ընթերցողը պատրաստ է մտնելու վիպական լարված գործողությունների մեջ: Քիմիկոսի կյանքն ընթանալու է այլ հունով. նա պիտի աշխատի արտաքին հետախուզությունում, որտեղից պիտի դուրս գա 16 տարի անց: «Դուրս կգա չհասկալիք էրգի նման ու գահընկեց արքայի պես՝ ինչպես բանաստեղծը կասեր»³, -կանխատեսում է գրողը: Տպավորիչ է ներկայացված Հովակիմյան-հետախույզի «մկրտությունը»: Պիտի հանդիպի գործակալին և նրանից ստանա քիմիական սարքաշինական գործարանի առաջատար մասնագետների ցուցակը: Պայմանավորվածության համաձայն պիտի հարցներ, թե մոտակայքում ժամագործ կա: Բայց Հովակիմյանը պատասխանում է, թե անծանոթ է քաղաքին: Հետո

² Նույն տեղում, էջ 14:

³ Նույն տեղում, էջ 17:

բացատրում է, որ նկատել է այդ կնոջը հետապնդողներին: Հանդիպելիս Եվա Մարտեն ծիծաղում է. «Բայց դուք լավ դերասան կլինեք»⁴:

Աղաբաբյանի վեպում պատմական ժամանակաշրջանը ներկայացված է խոսուն, իրավիճակի ամբողջ լրջությամբ: Մեծ մարդու ճակատագիրը վճռում են չնչին խամաճիկները, որի պատճառով կերպարն ավելի ողբերգական է դառնում: Հովակիմյանը՝ Գենադի մականվամբ հետախույզը, կյանքն անցկացում է Գերմանիայում, Ամերիկայում, որտեղից կարևոր տեղեկություններ էր կորզում խորհրդային հայրենիքի համար: Բնական են կերպարի տագնապներն ու կասկածները. «Ողջ գիշերը լուսացրեց առանց աչք կապնելու: 48 ժամ չէր քնել... Իսկ եթե նրանք կյանքի գնով ձեռք բերած այսքան փաստաթղթերը պարզապես թափոնի՞ են վերածում... քո կյանքը մի գրոշ չարժե... Ում հետ աշխատել ես, նրանք արդեն չկան՝ Արտուզովը, Սլուցկին, Գուտցայտը, Բազարովը, Ռուսյանցը: Մեծ պրոֆեսիոնալներ... արդեն մոխիր դարձած... Ո՞ւմ մահն է գուժում զանգը: Քո՛ մահը: Հերթն իրենն է... գնդակահարվելու»⁵: Տրամադրություններն ասես բխում են Չարենցի «Դեպի լյառը Մասիս» պոեմից. բոլոր մեծ անհատներն էլ ժամանակ առ ժամանակ նժարում են իրենց գործը:

Վեպը գիտագեղարվեստականության և փաստագրության համաձուլվածք է: Խոսուն և արտահայտիչ ենթավերնագրերը «2777 օր դանակի շեղքի վրայով», «Բանտում բոլորի համար տեղ կճարվի», «Երկիրը մանկուտների ձեռքին», «Կյանքս թեթև տանուլ տված գրքագ եղավ, անցկացավ» և այլն, հուշում են իրադարձությունները: Զարմանալ կարելի է, թե ինչպես խորհրդային կարգերի թոհուրոհի մեջ հայազգի ռեզիդենտը կարողացավ պահել իր ինքնությունը և համարձակություն ունեցավ նույնիսկ հակադրվելու Բերիային և նրա որոշումներին: Պատահական չէ, որ կոչումից զրկվելուց հետո որպես ըմբոստության և արհամարհանքի արտահայտություն՝ Հայկ Հովակիմյանը աշխատանքի է ներկայանում գեներալ-լեյտենանտի համազգեստով:

Հայկ Հովակիմյանի գործունեությունից. 1939-1940 թթ. Ամերիկայից 31000 էջանոց 450 տեղեկատվական կարևորագույն փաստաթղթեր է ուղարկել Մոսկվա, 1055 գծագրեր, նոր տեխնիկայի 163 օրինակ (դրանց մեջ՝ B-29 ամերիկյան ռմբակոծիչը TU-4 ինքնաթիռի նախատիպն է) և այլն: Իսկ Ամերիկայում բանտից ազատվում է անձամբ Ռուզվելտի հրամանով, որովհետև Ստալինն էր նրա համար միջնորդել: Նրա ջանքերով է ստեղծվել

⁴ Նույն տեղում, էջ 37:

⁵ Նույն տեղում, էջ 126:

նաև ENORMOUS-ը՝ խորհրդային ատոմոյին ռումբը: Ահա այդպիսի տիտանական աշխատանք կատարած գործիչը չգիտի՝ ի՛նչ ճակատագիր կունենա, որովհետև երկիրը ղեկավարում են մանկուրտները: Բայց մեծ են այն մարդիկ, ովքեր կյանքի ցանկացած իրավիճակում կարողանում են հավատարիմ մնալ սեփական էությանը: Հովակիմյանը, հակառակ կյանքի վերջին տարիների մեկուսացվածությանը, կարողանում է մեղադրանքից ազատել Արամ Խաչատրյանին: Իսկ ռեգիդենտի կյանքը խնայվում է, որովհետև Ստալինը, դիմելով Բերիային, ասել էր՝ Հովակիմյանը վաստակել է իր մահով մեռնելու իրավունքը⁶: Խորհրդային երկրի գիտության ասպարեզում մեծ ներդրում ունեցած գործիչը կյանքի վերջին տարիներն անցկացրեց գրեթե մեկուսացված: Բնական են հնչում Հովակիմյանի վերջին խոսքերը Թումանյանի հայտնի քառյակից. «Կյանքս թեթև տանուլ տված զըրազ եղավ, անցկացավ»:

Հավատարիմ մնալով կենսագրական վեպերի հրապարակախոսական և քարոզչական բնույթին՝ հեղինակն օժտում է իր հերոսին դրական հատկանիշներով: Բայց նա փա՛ստն է ներկայացնում. 1996-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինի հրամանագրով հերոսության և արիության դրսևորմամբ իրենց կյանքը վտանգի ենթարկած խորհրդային արտաքին հետախուզության աշխատակիցներ Վլադիմիր Բարկովսկուն, Լեոնիդ Կվասնիկովին (ետմահու), Լեոնտինա Կեռնին (ետմահու), Ալեքսանդր Ֆիլիխտովին, Անատոլի Յացկովին (ետմահու) շնորհվեց Ռուսաստանի Դաշնության հերոսի կոչում. բոլորը գործել են Հայկ Հովակիմյանի անմիջական ղեկավարությամբ: «Սակայն ՌԴ նախագահի հրամանագրում զարմանալիորեն տեղ «չգտավ» Հայկ Հովակիմյանի ազգանունը... Գուցե մտածել էին (կամ թողել էին), որ անկախ Հայաստանի Հանրապետությունը մի օր արժանին կմատուցի իր զավակին»⁷:

Վեպը գրված է կինեմատոգրաֆիայի ոճով: Կարճ, բայց խոսուն գլուխները չափազանց տպավորիչ են: Հեղինակն ասես ջանք չի թափել. պարզապես ներկայացրել է եղելությունը: Բնականությունն էլ ապահովում է վեպի գեղարվեստականությունը: «Ռեգիդենտ»-ը վեպն ունի նաև թերություններ: Գլխավոր հերոս Հայկ Հովակիմյանը, կարելի է ասել, գեղարվեստական կերպար չի դառնում, որովհետև գրեթե չի տարբերվում մյուս հերոսներից:

⁶ Նույն տեղում, էջ 377:

⁷ Նույն տեղում, էջ 402:

Վեպն ընդունելություն գտավ և գնահատվեց ինչպես հայ իրականության մեջ, այնպես էլ արտերկրում: Թարգմանվեց ռուսերեն, անգլերեն, պարսկերեն, իսկ պարսիկ հանրահայտ կինոռեժիսոր, Կաննի, Տորոնտոյի, Բրիսբենի կինոփառատոների մշտական մասնակից, Հարավկորեական կինոփառատոնի և կաթոլիկ եկեղեցու մրցանակների դափնեկիր Բեհրուզ Աֆղամին պատրաստվում է հայ գրող Աղաբաբյանի «Ռեզիդենտը» վեպի հիման վրա նկարահանել բազմասերիանոց գեղարվեստական ֆիլմ⁸:

2013-ին լույս տեսավ Ա. Աղաբաբյանի երկրորդ կենսագրական վեպը՝ «Մենակը», որտեղ ներկայացվում է Գրիգոր Գուրգադյանի կյանքի պատմությունը: Գուրգադյանը վեպում Առնո Սարոյան անունով է: Վեպը տարակարծությունների տեղիք տվեց: Զորի Բալայանը «Գրական թերթ»-ում հանդես եկավ «Հերյուրանքը հորինվածք չէ կամ արջի ծառայություն» հոդվածով⁹, որտեղ արտահայտում էր իր և Գուրգադյանի հարազատների վրդովմունքը¹⁰: Փաստում է նաև, որ Գուրգադյանի ընտանիքի անդամները դատի են տվել հեղինակին: Իրողությունն այն է, այլ բան է փաստական իրականությունը, այլ է գեղարվեստական ճշմարտությունը: Իսկական գրողը առաջնորդվում է հոգու պահանջով, իսկ լավ գիրքը ձևավարում է հասարակության ճաշակը:

Կենսագրական վեպի կարևոր առանձնահատկություններից մեկը փաստական ճշմարտության հենքով գեղարվեստական ճշմարտության բացահայտումն է: Բայց գրողների առջև միշտ էլ առկա են դժվարությունները. փաստին տուրք տալու դեպքում նրանք դառնում են ընդամենը վերապատմող՝ գրկվելով ստեղծագործական գյուտ կատարելուց: Գրքի խմբագիր Ներսես Աթաբեկյանը խուսափել է ստեղծագործությունը կենսագրական վեպ դիտարկելուց. «Վեպը ոչ թե որպես կենսագրական կամ գիտական-արկածային ստեղծագործություն կարդալու-անցնելու, այլ մենակի երջանկությունն ու դժբախտությունը վերապրելու համարձակությունը պիտի ունենանք»¹¹: Գրողը զանց է արել այն փաստական ճշմարտությունը, որոնք վերաբերվում են նրա անձնական

⁸ Արտասահմանյան բազմասերիանոց ֆիլմ՝ հայ հեղինակի վեպի հիման վրա: Աղբյուրը՝ Nyut.am –ի :

⁹ **Զ. Բալայան**, «Հերյուրանքը հորինվածք չէ կամ արջի ծառայություն», «Գրական թերթ», 7.05.13

¹⁰ Հետաքրքրականն այն էր, որ հոդվածը գրելու ընթացքում նկատեցի, որ երբ երկրորդ անգամ գիրքը պատվիրեցի, օրինակի վրայից ջնջել էին Գր. Գուրգադյանի անունը:

¹¹ **Աղաբաբյան Ա. Լ.**, Մենակը, Հեղինակային հրատարակություն, Ե., 2013, էջ 4:

կյանքին և «կապ չունեն գիտնականի հետ»¹²։ Գեղարվեստական ինքնատիպ հնարանք է նաև «վեպ վեպի մեջ» կիրառությունը վերջին մասում։ Սարոյանը գրում է ինքնակենսագրական վեպ, կրկնվում է նախաբանը։ Նա հերոսի անվան կիրառման անհրաժեշտությունը չի տեսնում. թեկուզ կարող է անվանել Աշոտ Աղաբաբյան։ Սա փաստում է, որ վեպը նվիրված է ոչ միայն Գուրգադյանին, այլև ցանկացած մեկին, ով մենակ է ու չհասկացված։ Իսկ ո՞վ է հասկացված և ընդունված։ Գրականագետ Ս. Մուրադյանը իրավացիորեն նկատում է, որ գրական հերոսի նախատիպի մեջ միայն Գրիգոր Գուրգադյանին տեսնելը սխալ է։ «Հիմա պատկերացնենք մի գրական հերոս, որն ունի իրական նախատիպ, որն է ընթերցող եթե փորձի Առնո Սարոյանի կերպարի մեջ տեսնել միմիայն Գրիգոր Գուրգադյան աստղաֆիզիկոսի կյանքի պատմությունը, հաստատ կսխալվի, որովհետև այս նախատիպի հիման վրա հեղինակ Աշոտ Աղաբաբյանը ստեղծել է գրական-գեղարվեստական ուժեղ կերպար, որն իր մեջ ներառել է ոչ միայն մեկ անհատականության, այլ մի քանի անձնավորությունների բնավորության զանազան գծեր, խտացված մեկ անհատի լիարժեք կերպարի մեջ»¹³։

Մի քանի փաստեր նշենք, որոնցից շեղվել է հեղինակը։ Աշխարհառչակ աստղագետը գործել է Բյուրականում և Բյուրականի աստղադիտարանի հիմնադիրներից է, ապա Գառնիում, իսկ Զիկատարը (բնապահպանական կենտրոն Տավուշի մարզում) հեղինակին է։ Ակադեմիկոս Գուրգադյանը ունի երկու որդի, վիպական հերոսը՝ մեկ դուստր և մեկ որդի։ Գիտնականի կինը՝ Մարիաննա Գուրգադյանը, դուստրն է նշանավոր հայագետ, Ն. Մառի աշակերտ, Անիի պեղումների մասնակից Աշխարհաբեկ Քալանթարի։ Մակայն վեպում ներկայացված է կենցաղային հոգսերի մեջ խճճված սովորական մի կին, թեպետ գրագետ ու խելացի, և երբ որդին արտասահմանում սովորելու հնարավորություն է ստանում, գնում է որդու հետ՝ հասկացնելով, այլևս հայրենիք չի վերադառնա։ Յուրաքանչյուր ոք իր երջանկությունն ու անդորրը տեսնում է ընտանիքում. Սարոյանի կնոջը հեղինակը դիտավորյալ ներկայացնում է որպես նրա հակապատկեր շեշտելու համար հերոսի մենակությունը։

Աղաբաբյանը օգտվել է իրեն վերապահված գրողի ազատությունից։ Այս առումով ստեղծագործական գյուտ պիտի համարել Մանեի հայտնությունը՝ սկզբում որպես տեսիլք ու երազ, հետագայում՝ նաև

¹² Նույն տեղում, էջ 2:

¹³ Nyut. am // Աշոտ Աղաբաբյանի մենակը դարձյալ կվերահրատարակվի: 12 մարտ 2016:

իրականություն, ով կարճ ժամանակ անց հեռանում է՝ հերոսին լքելով կյանքի ամենադժվարին պահին: «Ողջ կյանքում փնտրել եմ կնոջը, այն կին արարածին, որին հանդիպելիս ինձնից ոչինչ չմնար, դառնայի բոց, կերոն, դառնայի մոխիր»¹⁴, - երագում էր Գուրգադյան-խոհագրողը:

Մեծ անհատը ինքնատիպ իմաստասիրություն ունի. «Յուրաքանչյուր կնոջ սխալի մեջ տղամարդու մեղք կա»¹⁵: Նույն միտքը երկու անգամ կրկնվում է վեպում, առաջին անգամ, երբ հերոսին լքում է կինը և երկրորդ անգամ, երբ լքում է Մանեն: Հատկանշական է վերջին հատվածներում «բովանդակ»¹⁶ մեջ հայտնվելը: Կարծես գալիս է դարեր շարունակ կրկնված իմաստությունը՝ «ունայնություն ունայնությանց»-ը, որովհետև բոլոր տառապյալներն էլ հասնում են նույն վերջին: Չհասկացված է ամեն ոք, բայց հզոր անհատի մենությունն ավելի խորն է: Մենակ է պատերազմում ոտքերը կորցրած և անցումի տակ շրթհարմոն նվագող զինվորականը, որ ձևակերպում է իր հասկացած դառը ճշմարտությունը. «Պետությունը կորցրի ոտքերիս հետ միաժամանակ... սա կյանքի հատակն է»¹⁷: Հեռավոր Զիկատարում մենակ է նաև մեծ գիտնականի հոգեկից կրկնորդը՝ գիշերային լուսության մեջ կաղկանձող գայլը: Վեպում մի քանի անգամ կրկնվող պատկերի գեղագիտությունը ընկալվում է որպես հասարակությունից վեր բարձրացած, ներքին էությանբ նրանից տարբեր անպարտելի մարդու ընդդիմություն:

Աղաբայանի հերոսը տարբերվում է իր միջավայրից: Կոմունիստ չէր, բայց հանդուրժում էին բացառիկ տաղանդի և աստղագիտության ոլորտում աշխարհահռչակ գյուտերի համար: Հետաքրքրական է ներկայացված գիտության ոլորտում կատարած առաջին քայլերից մեկը: Բալիստիկ հրթիռների գլխավոր կոնստրուկտոր Գրիգորի Բոլդինի աշխատանքում սխալ է գտնում և ակամայից նրա կործանման պատճառ է դառնում: Բոլդինին հեռացնում են աշխատանքից: Սարոյանը հոգեպես տանջվում է այդ պատճառով. մի քանի անգամ միջնորդում է տարբեր մարդկանց առաջ՝ Կորոյովի, որը և ազատել էր Բոլդինին, Կորոյովի մահվանից հետո Վասիլի Պավլովիչ Միշկինի:

Մեծություն է նաև Բոլդինը, ում բնորոշ է ներման և դիմացինի հանճարեղության գիտակցումը: Նա Սարոյանին հորդորդում է իրենից

¹⁴ Գուրգադյան Գ. Ա., Նարեկացու աղերսանքը, Երևան, Ապոլոն, 1993, էջ 347:

¹⁵ Աղաբայան Ա. Լ., Մենակը, էջ 167 և 293:

¹⁶ Ցանկալի կլինեք, որ հեղինակն օգտագործեր թափառաշրջիկ բառը կամ էլ Օշականի «քոքուր»-ին նոր կյանք տար:

¹⁷ Նույն տեղում, էջ 89:

թոթափել մեղավորության զգացումը: Սարոյանը ցնցվում է, երբ հրաժեշտին Բոլդին ավելացնում է. «Այնուամենայնիվ, Կորոյովը ճիշտ էր... որ ինձ հեռացրեց»¹⁸:

Հզոր անհատականություն էր նաև Կորոյովը, ով ժամանակին աքսորված էր Սիբիրում և պահպանում էր Սարոյանին, որպեսզի իր նման չհալածվի և մեկուսացվի գիտությունից: Գրուրգադյանը իր հարցազրույցներում բարձր էր գնահատում Կորոյովին և այն կարծիքի էր, որ եթե ճիշտ վարվեին նրա հետ, ապա կկանխվեր Երկրորդ համաշխարհային պատերազմը: Վավերական կերպարը սրանով հավաստի է դառնում. Գրուրգադյանը գնահատում էր մենակի ուժը. «Մի մարդը հերիք էր...»¹⁹: Միշկինի և Կելդիշի երկխոսության մեջ երևում է հեղինակային նպատակադրույթը՝ ներկայացնել հզոր անհատականությանը. «Սուլովները չեն սիրում **անհատականություններին...** (ընդգծումը մերն է՝ Ն. Կ.) Բոլոր ժամանակներում ղեկավարությունը նախընտրում է գորշ, հյու զանգվածին... Նա անպաշտպան երեխայի նման է, և դա քիչ է՝ հաճախ է խաղում կրակի հետ՝ մոռանալով, որ այն լավել գիտի... Մտածում է գլխավորի, մնայուն գործ ստեղծելու մասին, իսկ շրջապատը խանգարում է: Դա հզոր անհատի ողբերգությունն է»²⁰: «Ստեղծագործող անհատականությունը անպաշտպան է, և գիտնականը շատ կուզենա, որ իրեն հանգիստ թողնեն, որ ոչ մի չինովնիկ ու բյուրոկրատ չխառնվի իր գործին...»²¹ - գրում էր Գրուրգադյանը՝ փափագելով ստեղծագործողի ազատություն:

Աղաբայանն իր վեպում ներկայացնում է մեծ գիտնականի փորձություններով լի կյանքի ճանապարհը: Սարոյանը շրջապատված է թշնամիներով և անցնում է հալածանքի ուղի: Հաճախ են ուզում կտրել թևերը թռիչքի պահին: Նույնիսկ մահափորձ են կատարում նրա դեմ:

Հատկանշական է, որ Հեկտոր Հարությունյանը (նախատիպը Վիկտոր Համբարձումյանն էր). չէր հանդուրժում Սարոյանին, բայց հավատում էր և վստահում: Ալֆա-2-ի ստեղծման գործում ևս իր դերակատարությունն է ունենում՝ գործի հաջողությանն իր երաշխիքը տալով: Իսկ մենագրությունը, որը չորս տարի գտնվում էր Հեկտոր Հարությունյանի մոտ, անհրաժեշտ առաջաբան չգրելու պատճառով չէր տպագրվում և միայն Լև Անդրեևիչ Արցիմովիչի խոսքից հետո, որը երեք օրից գիրքը տպարան էր իջեցնելու,

¹⁸ Նույն տեղում, էջ 86:

¹⁹ Youtube // Մարդու ժամանակը. Գրիգոր Գրուրգադյան: Հասանելի է:

²⁰ Աղաբայան Ա. Լ., Մենակը, էջ 211-213:

²¹ Գրուրգադյան Գ., Կաքավաբերդի առեղծվածը: Էսսեներ: Ե., «Ապոլոն», 1998, էջ 170:

պատրաստում է մեկ ժամում: Հետաքրքրական է գրույցը Հարությունյանի հետ. Խրոմոսի գաղափարը ողջունում է, հասկանում և խոստովանում, որ այն օրը, երբ Խրոմոսը կոսմոս բարձրանա, պիտի փակեն աստղադիտարանը: «Աչքերից արցունքներ թափվեցին: Առնոն հասկացավ, որ նա իր կյանքի ամենագարիտուրելի միտքն արտահայտեց... Նա խղճաց մեծ գիտնականին... Երկունս էլ արտասվում էին»²²: Հայաստանի գիտությունների ակադեմիայի անդամ չլինելու պատճառով Մարոյանը չի մասնակցում Աթենքում կայանալիք գիտաժողովին, իսկ անդամ դառնալու հարցը որոշում էր Հայաստանի գիտությունների ակադեմիան՝ հանձին Հարությունյանի: Մակայն Մարոյանը օժտված էր հոգու վեհությամբ և երբ Կենտկոմի առաջին քարտուղարը նրանց կանչում է իր մոտ և վիրավորելու աստիճան զայրանում է Հարությունյանի վրա, Մարոյանը ձեռքը զայրացած խփում է սեղանին. «Ի՞նչ իրավունքով եք վիրավորում նրան»²³: Հերոսն ապրում է ողբերգություններից մեծագույնը, երբ տեսնում է, որ իր ստեղծած գյուտը օգտագործում են ռազմական նպատակով՝ կործանելու և ավերելու համար: Այդ միտքը Գուրգադյանը մեկ անգամ չէ, որ արտահայտել է. «Եթե բաժանենք կուտակված ռումբերի քանակը երկրագնդի հինգ միլիարդանոց բնակչության վրա, ապա մի մարդուն չորս տոննա ռումբ կհասնի... Մարդկությունը չի հասել այն մակարդակին, որ մեկ մարդու համար կարողանար չորս տոննա հաց արտադրել... նա արդեն կանգնած է ինքնառնչանցման վտանգի առաջ»²⁴: Մարոյանը հրաժարվում է համագործակցել երկրի հրթիռային պաշտպանության գլոբալ համակարգի ստեղծման աշխատանքներում, բայց հրթիռներ ստեղծելով՝ ուզում է օգուտ տալ իր երկրին, որ պատերազմը դադարի: Հերոսը մեծ հայրենասեր էր, մտահոգ էր հազարավոր զինվորների անդարձ կորուստով և պատրաստ էր իր գիտելիքները ներդնել երկրի խաղաղության համար: Ցավոք, մերժում է ստանում պաշտպանության նախարարից՝ այն պատճառաբանությամբ, որ ծախսերը կազմում են երկու տարվա բյուջեն: Գուրգադյանի՝ հայրենիքի հանդեպ պաշտամունքի հասնող սերը հատկապես ուշագրավ է երևում «Կաքվաբերդի առեղծվածը» էսսեում. «Ես չգիտեմ, թե ով է եղել Կաքվաբերդը ստեղծող իշխանը, բայց պարզ է արդեն, որ նա չի մտածել, մտքովն իսկ չի անցկացրել հավաքել ունեցած-չունեցածը, կապել-կապկպել տուն-տեղ, առաջը գցել երեխաներին, ընտանիքը ու կորչել, հեռանալ այս

²² Աղաբաբյան Ա. Լ., Մենակը, Հեղինակային հրատարակություն, Ե., 2013, էջ 211-213:

²³ Նույն տեղում, էջ 269:

²⁴ Գուրգադյան Գ., Նարեկացու աղերսանքը: Ե., «Ապոլոն», 1999, էջ 166-167:

ավերված երկրից և փնտրել հանգստություն, ապահովություն օտար հողի վրա...»²⁵:

Վեպը հետաքրքրական է ստեղծագործող անհատի տառապանքն ու հոգեբանությունը ներկայացնելու առումով: Հատկանշական է վերջը: Պրոֆեսորը գրել է իր վեպի վերջին տողերը. «Նրա ժամանակը վերջացավ: Տիեզերք վերադառնալու ժամանակն է... Փակելով ձեռագիր հաստափոր տետրը՝ մեկնեց Կիևյան կամրջի»²⁶ ուղղությամբ»²⁷: Սակայն կատարվում է «հրաշքը». միտքը փայլատակում է և գտնում երկու տարի շարունակ որոնվող Խրոմոսի դետալի լուծումը: «...Կամուրջն անցել էր...»²⁸: Այսինքն՝ էլքն ու լուծումը մեկն է՝ ստեղծագործել, աշխատել, նորանոր բարձունքներ նվաճել: Այսպես էր իր «Պարապություն»-ը լրացնում նաև Պարույր Սևակը: Որովհետև անելիքը չիմանալու և պատեպատ զարկվելու էլքը դարձյալ ստեղծագործելն է, իր հոգեվիճակին ուրիշներին հաղորդ դարձնելը, Առնո Սարոյանի պարագայում՝ Խրոմոսի գաղափարը իրագործելը:

Հեղինակն ստեղծել է լիարյուն գեղարվեստական կերպար, իսկ որպես հերոսի նախատիպ՝ Գուրգադյանը մեծ էր տարբեր բնագավառներում: Աղաբաբյանը ներկայացնում է միայն գիտնական Գուրգադյանին, ինչ-որ կերպ, կյանքի վեպը գրելու կապակցությամբ հիշատակվում է նաև գրողը: Իսկ ո՞ւր է նկարիչը, արվեստի տեսաբանը: Իրավացիորեն է նկատել Թորոս Թորանյանը, որ Գրիգոր Գուրգադյանի կյանքին ու գործունեությանը ծանոթացողներից ցանկացած մեկը պիտի հարցնի. «Գուրգադեանը նկարիչ է, ճարտարապետ, քանդակագործ, արվեստի քննադատ, թե աստղաֆիզիկոս...»²⁹:

Աշոտ Աղաբաբյանի «Ռեզիդենտը» վեպում դեռևս զգալի էր լրագրողական ոճը. հեղինակն ավելի շատ վավերագրող էր և իրադարձությունների «գեղեցիկ» վերապատմող: «Մենակը» վեպը գեղարվեստորեն ավելի հասուն է, և հեղինակը կարտարելագործել է գրողական ձիրքը: Հեղինակը ժլատ խոսքով, երբեմն նույնիսկ ակնարկի միջոցով տիպիկ կերպով է պատկերում ժամանակաշրջանը:

²⁵ Գուրգադյան Գ., Կաթավաբերդի առեղծվածը: Էսսեներ: Ե., «Ապոլոն», 1998: էջ 103:

²⁶ Ցանկալի կլինեք հեղինակը գործածել կամուրջի անհնչյունափոխ ձևը, որը համապատասխանում է ժամանակակից գրական հայերենին, ոչ թե կամրջի բարբառային ձևը:

²⁷ Աղաբաբյան Ա. Լ., Մենակը, Հեղինակային հրատարակություն, Ե., 2013, էջ 304:

²⁸ Նույն տեղում, էջ 306:

²⁹ Թորանեան Թ., Տիեզերքի խուզարկուն Սուրիոյ մէջ: Երկու շաբաթ ակադեմիկոս Գուրգադեանի հետ: Ե., «Զանգակ-97», 2003 թ., էջ 6:

Աշոտ Աղաբաբյանի երկու վեպերն էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում և շահել են ընթերցողների համակրանքը:

Ն. Կարախանյան

ԱՇՈՏ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԵՐԸ
(«ՌԵԶԻԴԵՆՏ», «ՄԵՆԱԿԸ»)

Ամփոփում

Հոդվածում վերլուծված են Աշոտ Աղաբաբյանի «Ռեզիդենտը» (2004, 2014) և «Մենակը» (2013) վեպերը՝ կենսագրական վեպի շրջանակում: «Ռեզիդենտը» պատմում է հայազգի հետախույզ Հայկ Հովակիմյանի մասին և բնույթով փաստագեղարվեստական ստեղծագործություն է, իսկ «Մենակը» նշանավոր աստղագետ Գրիգոր Գուրգադյանի կենսապատումն է և զուտ գեղարվեստական ստեղծագործություն է: Հեղինակը ինքնատիպ է մեկնաբանում կերպարների հոգեբանությունը՝ «Մենակի» դեպքում նույնիսկ փոքր-ինչ շեղվելով իրական նախատիպերից (Գրիգոր Գուրգադյան, Վիկտոր Համբարձումյան, Կորոյլով և այլք) ստեղծել է գեղարվեստական լիարյուն կերպարներ:

Н. Караханян

Биографические романы Ашота Агабабяна («Резидент», «Одинокый»)

Резюме

В статье проанализированы романы Ашота Агабабяна «Резидент» (2004, 2014) и «Одинокый» (2013) в рамках биографического романа. «Резидент» рассказывает об армянском разведчике Айке Овакимяне и по своему характеру является художественно-документальным произведением, а «Одинокый» жизнеописание знаменитого астронома Григора Гургадяна, и чисто художественное произведение. Автор оригинально комментирует психологию персонажей. В случае «Одинокого» даже ненамного отступая от настоящих прототипов (Григор Гургадян, Виктор Амбарцумян, Королёв и другие) создал полноценные художественные персонажи.

N. Karakhanyan

BIOGRAPHICAL NOVELS BY ASHOT AGHABABYAN
(“THE RESIDENT”, “THE LONELY”)

Summary

“The Resident” (2004, 2014) and “The Lonely” (2013) novels by Ashot Aghababayan are analyzed in this article within the framework of biographical novel. “The Resident” tells about Armenian secret service agent Hayk Hovakimyan and it is

characterized as a documentary work. “The Lonely” is the life history of the famous astronomer Grigor Gurzadyan and it is just a fiction. The author exposes the psychology of the characters. In the case of “The Lonely” he has even slightly deviated from the real prototypes (Grigor Gurzadyan, Victor Hambardzumyan, Korolev and others), creating full-featured fictional characters.